**ՍԵՎԱՆԻ ԱՎԱԳ ԴՊՐՈՑ**

**ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ**

# Ավարտական հետազոտական աշխատանք

Թեման- **ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԸ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ՝ ՈՐՊԵՍ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆՈՒԹՅԱՆ, ՆԱԽԱՁԵՌՆՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՋՈՑ**

Վերապատրաստվող՝ Հասմիկ Գաբրիելյան

Դպրոց՝ Գեղարքունիքի մարզ, ք. Ճամբարակի հ 4 միջնակարգ դպրոց

Վերապատրաստող՝ Էմմա Իսրայելյան

**Բովանդակություն**

1. **Ներածություն ----------3**
2. **Հետազոտության համատեքստ----------6**
3. **Գործնական համատեքստ----------10**
4. **Հետազոտության ընթացք----------12**
5. **Եզրակացություն----------18**

## Ներածություն

Իր լայն իմաստով կրթություն նշանակում է գործընթաց, որի միջոցով մեկ հասարակության գիտելիքները, սովորությունները, սովորույթներն ու արժեքները փոխանցվում են հաջորդ սերունդ:

Կրթությունը սոցիալական կյանքի համընդհանուր և բարդ երևույթ է, որն անփոխարինելի է մշակույթների շարունակականությունն ապահովելու համար: Այն ընդգրկում է դարերով ձեռք բերված բազմազան գիտելիք, հմտություն, փորձ և գործունեության ձևեր:

Կրթությունը կարող է լինել ֆորմալ և ոչ ֆորմալ:

Ֆորմալ կրթություն ասելով՝ սովորաբար նկատի ունենք պաշտոնական կրթությունը: Ֆորմալ կրթության վերջնարդյունքն ամփոփվում է իրավասու մարմինների կողմից հաստատված վկայականով կամ դիպլոմով՝ պետության կողմից ճանաչված:

Ֆորմալ կրթությունն իրականացվում է մանկապարտեզներում, տարբեր տիպի և աստիճանի դպրոցներում (տարրական, հիմնական, ավագ, միջնակարգ, արհեստագործական, միջնակարգ-մասնագիտական՝ քոլեջ), բուհ-երում, ետբուհական կրթական հաստատություններում:

Ըստ էության՝ պաշտոնական կրթության ձևերից մեկն է դարձել համեմատաբար վերջերս համընդհանուր տարածված շարունակական կրթությունը: Դա անվճար դասընթացների միջոցով ցանկացած անձի առաջարկվող վերապատրաստման գործընթաց է՝ ըստ անձնական կամ աշխատանքային հետաքրքրությունների:

Պաշտոնական կրթության շրջանակներում է նաև հատուկ կարիքներ ունեցող անձանց սոցիալական, մտավոր, ֆիզիկական և հոգեբանական ներուժի զարգացմանը միտված հատուկ կրթությունը:

Կրթության կազմակերպական ձևը կարող է լինել ինչպես պետական, այնպես էլ՝ մասնավոր:

Թեև մասնավոր կրթական հաստատությունները համարվում են շահույթ հետապնդող, բայց փորձը ցույց է տալիս, որ հաճախ մասնավոր դպրոցներում ու բուհ-երում սովորողներն ավելի որակյալ կրթություն են ստանում: Մասնավոր դպրոցներում ու բուհ-երում սովորած անձինք ավելի արագ ու ճիշտ են կողմնորոշվում սոցիալական հասարակությունում, ավելի լայն աշխարհայացք ու արժեքային համակարգ, ավելի ամբողջական պատկերացում ունեն աշխարհի մասին:

Սա ցույց է տալիս, որ մասնավոր կրթությունը հաջողությամբ մրցակցում է պետական կրթության հետ: Այս մրցակցությունը միայն դրական դինամիկա պիտի ունենա, նպաստի կրթության որակի բարձրացմանը:

Ժամանակակից դպրոցը նման է մի մեծ լաբորատորիայի, որտեղ մանկավարժների և սովորողների ջանասեր աշխատանքը թույլ է տալիս ձեռք բերել անգնահատելի մի փորձ, որն էլ նպաստում է նոր չափանիշներին համապատասխան կրթական արդյունքների ապահովմանը, ձեռքբերմանը, գնահատմանը, կրթության, ինչպես նաև ուսուցիչների աշխատանքի որակի գնահատման չափանիշների համատեղ որոնմանը: Հանրակրթության պետական չափորոշչով յուրաքանչյուր ուսումնական բնագավառներ կայացվում է կրթության բովանդակության հետևյալ բաղադրիչների միջոցով՝ գիտելիքների համակարգ, կարողություններ և հմտություններ, արժեքային համակարգ: Այսինքն՝ յուրաքանչյուր դասի ժամանակ ուսուցիչը զուգահեռ պետք է աշխատի այդ երեք ուղղություններով՝ յուրաքանչյուրի համար դնելով համապատասխան նպատակներ:

Ուսումնառությունը, որը զուրկ է որևէ հետաքրքրությունից և տրվում է միմիայն պարտադրանքով, սպանում է սովորողների մեջ սովորելու ձգտումը, իսկ այն ուսումնառությունը, որը հիմնված է առարկայի նկատմամբ հետաքրքրության վրա, տալիս է ցանկալի արդյունք: Սովորողը պետք է ներգրավված լինի դասապրոցեսին: Ներգրավվածությունը մեծացնելու համար տարբեր միջոցներ կան: Դրանցից մեկը ՏՀՏ-ի կիրառումն է դասապրոցեսի ընթացքում: Ժամանակակից աշակերտի առօրյայի անբաժանելի մասն են կազմում համակարգիչն ու համացանցը, և նրա կիրառությունը դասապրոցեսին ավելի արդյունավետ կդարձնի դասը:

Գիտելիքը չի կարող և չպետք է լինի ֆրագմենտար պատկերացումների համախումբ: Գիտելիքը պիտի լինի փոխկապակցված. Սովորողը պիտի հստակ պատկերացնի, որոնի, գտնի կյանքի տարբեր ոլորտների պատճառա-հետևանքային կապերը:

Գիտելիքը այս բոլոր կապերի հնարավորինս ամբողջական պատկերն է:

Ինչպես գիտենք դասավանդումը ոչ թե ինքնանպատակ գործունեություն է, այլ նպատակին հասնելու միջոց և դասավանդման գործընթացային ուսումնառության փոխներգործությունն ունի էական նշանակություն: Նյութի ներկայացման և հաղորդման՝ արդյունավետ ուսումնառությանը նպաստող տեխնիկաների մշակման և զարգացման համար ուսուցիչը պետք է լավ պատկերացնի, թե դասի որ մասում ինչ մեթոդներ կիրառի: Մեթոդը

փոխներգործուն գործընթաց է ուսուցչի և աշակերտի միջև, ինչի արդյունքում տեղի է ունենում գիտելիքի, հմտությունների և կարողությունների փոխանակում և յուրացում՝ նախատեսված ուսումնառության բովանդակությամբ:

## Հետազոտության համատեքստ

Սա է պատճառը, որ կրթության կազմակերպիչները անընդհատ ուսուցման ճանապարհ՝ մեթոդ են որոնել՝ որակյալ կրթություն տալու համար: Մեթոդները ուսուցման ձևեր ու հնարներ են, որոնք հեշտացնում են գիտելիքի արդյունավետ փոխանցումը, սովորողի կողմից գիտելիքի յուրացումն ու կիրառումը:

Մանկավարժության ուսուցման մեթոդները դասակարգվում են պասիվ, ակտիվ և ինտերակտիվ տեսակների : **Պասիվ** մեթոդներով դասավանդման ժամանակ գլխավոր դերակատարը ուսուցիչն է, սովորողները լսողի դերում են, կատարում են ուսուցչի հրահանգները: Պասիվ մեթոդները ուսուցչից քիչ նախապատրաստական աշխատանքներ են պահանջում և համեմատաբար մեծ ծավալի նյութի մատուցման հնարավորություն են տալիս:

**Ակտիվ** մեթոդների հիմքում ընկած են երկխոսությունը ինչպես ուսուցչի և սովորողների, այնպես էլ իրենց՝ սովորողների միջև: Ակտիվ ուսումնառության մեթոդներով դասավանդման ժամանակ գերակայում է սովորողի դերը: Երկխոսության ընթացքում զարգանում է սովորողների հաղորդակցման հմտությունները, խնդիրները միասին լուծելու կարողու-թյունները: Այստեղ ուսուցիչը չի մատուցում պատրաստի գիտելիք, այլ սովորողների կողմից է գիտելիքը ինքնուրույն ձեռք բերվում՝ ակտիվ ճանաչողական գործունեության ընթացքում: **Կարճ՝ ուսուցում գործունեության մեջ** (ըստ Վիգոտսկու):

**Ինտերակտիվ** (փոխներգործուն) մեթոդը նշանակում է փոխներգործել, գտնվել ինչ-որ մեկի հետ երկխոսության մեջ: Այլ կերպ ասած՝ եթե ակտիվ մեթոդների դեպքում փոխադարձաբար ակտիվ գործունեության մեջ են գտնվում սովորողները և դասավանդողը, ապա ինտերակտիվ մեթոդների դեպքում սովորողները փոխադարձաբար ակտիվ գործունեության մեջ են գտնվում նաև միմյանց հետ, և ուսուցման պրոցեսում գերակայում է սովորողների դերը: Ինտերակտիվ ուսուցման ժամանակ դասավանդողն առաջատար դերում չէ. նրա դերը կրթական գործունեությունը դեպի դասի նպատակի իրականացում ուղղորդելն է:

Բոլոր հետազոտությունները ցույց են տալիս, որ մենք սովորում ենք անելով, այսինքն՝ մեր սովորածը կիրառելով: Այսպես սովորողները մշակում են

տեղեկատվությունը և յուրովի են այն ընկալում. սա կոչվում է«**կառուցողականություն»** :

Կառուցողականության գաղափարը սկիզբ է առել դեռևս Սոկրատեսից: Հետագայում տեսության մեկնաբանությունը տվել է Կանտը: Նա փորձել է միացնել գիտելիքի մասին գոյություն ունեցող երկու տարբեր տեսակետները՝ գործողությունների և առարկաների տրամաբանական վերլուծությունը և նույն այդ գործողություններին ու առարկաներին առնչվող սեփական փորձառությունը: Չնայած երկու տեսակետներն էլ ունեն իրենց առավելությունը, սակայն առանձին-առանձին ոչ մեկն էլ բավարար չէ աշխարհը լիարժեք ըմբռնելու համար: Կառուցողականության էությունն այն է, որ ուսումնառությունը պասսիվ գործընթաց չէ, ոչ էլ սոսկ ընդօրինակում, յուրացում: Այն ակտիվ գործընթաց, է և յուրաքանչյուր տվյալ պահին նոր ընկալումները ձևավորվում են սովորողի գիտակցության մեջ արդեն գոյություն ունեցող գիտելիքների կառույցում:

Կրթության մեջ գնալով ավելանում են ուսուցման ինտերակտիվ կամ փոխգործուն մեթոդները, որոնք օգնում են ավելի հետաքրքիր ու արդյունավետ դարձնելու գիտելիքի յուրացումը, զարգացնելու նախաձեռնելու, արագ կողմնորոշվելու, մարդկանց հետ հաղորդակցվելու, որոշումներ կայացնելու և այլ կարողություններ ու հմտություններ:

ՀՀ կրթության նոր չափորոշչի պահանջներին համապատասխան որակ ապահովելու ճանապարհին կարևորվում են փոխգործուն մեթոդները, ինչպիսիք են , հետազոտական, համագործակցային, պրոբլեմային ուսուցման մեթոդները:

Այդ մեթոդներին ավելանում է նաև մինչև վերջերս մեզ մոտ գրեթե կիրառում չունեցած նախագծային մեթոդը: Ճշմարտության դեմ չմեղանչելու համար ասեմ, որ նախագծային մեթոդի որոշ տարրեր օգտագործվել, են, բայց ամբողջական ձևով, ինչպես նկարագրված է, ոչ:

Ըստ էության՝ նախագծային մեթոդը հետազոտական, պրոբլեմային, ստեղծագործական մեթոդների համադրություն է:

Նախագծային մեթոդը խթանում է սովորողների հետաքրքրությունը որոշակի խնդիրների վերաբերյալ, որոնց լուծումը պահանջում է գիտելիքների որոշակի հանրագումար:

Այն հնարավորություն է տալիս սովորողներին՝

ա. ձեռք բերելու խոր գիտելիքներ քննարկվող հարցի վերաբերյալ

բ. ձևավորել գիտելիքներն ինքնուրույն ձեռք բերելու, գործնականում կիրառելու հմտություններ

գ. ձևավորելու քննադատական մտածողություն

դ. համագործակցային և հաղորդակցական հմտություններ և այլն:

Նախագծային աշխատանքը համարվում է հաջողված, եթե՝

ա. աշխատանքի թեման արտացոլում է սովորողների հետաքրքրությունները

բ. սովորողները ներգրավված են հարցադրումներ անելու, ռեսուրսներ գտնելու, տեղեկություններ հավաքելու և կիրառելու գործընթացներում

գ. սովորողները կիրառում են հետադարձ կապ՝ բարելավելու գործընթացի արդյունավետությունը

դ. սովորողներն իրենց աշխատանքը ներկայացնում են դասարանում և դրա սահմաններից դուրս և այլն:

Նախագծային աշխատանքը պիտի ունենա հետևյալ հատկանիշները.

ա. ունենա պրոբլեմային հարցադրում

բ. լինի սովորողների կողմից ղեկավարվող

գ. լինի իրատեսական:

2022-2023 ուսումնական տարվա համար պլանավորեցի նախագծային աշխատանք կազմակերպել: Աշակերտներին բացատրեցի աշխատանքի նպատակն ու ձևը: նախագծային ախատանք ին մասնակցելու ցանկություն հայտնեցին 11-12-րդ երկհամակազմ դասարանի սովորողները, թվով 5 աշակերտ: համատեղ քննարկեցինք մի քանի տարբերակ, սովորողներին ավելի դուր եկավ Հայ գրականությունից «Ե. Չարենցի կյանքի և ստեղծագործության ողբերգությունը» թեման:

Ժամանակային առումով նախագծային աշխատանքները լինում են կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ: Աշակերտները, մոտավորապես պլանավորելով առաջիկա աշխատանքի ծավալը, որոշեցին վերցնել միջնաժամկետ աշխատանքի տարբերակը՝ 2 ամիս:

Նախագծի սկիզբը սեպտեմբերի 6-ն է, ավարտը՝ նոյեմբերի 10-ը:

Ըստ բովանդակության՝ նախագիծը միջառարկայական է. ներառում է Հայ գրականություն, Հայոց պատմություն, Արվեստ, ՏՀՏ, Ինֆորմատիկա:

Նախագիծը տեղեկատվական, հետազոտական բնույթի է, նախատեսված է 10-11-րդ երկհամակազմ դասարանի համար, որտեղ սովորում է 5 աշակերտ:

Արդեն իրականացվել է նախագծի նախապատրաստական փուլը և պլանավորման փուլի որոշ աշխատանքներ:

Սովորողներն ընտրել են նախագծի թեման՝ «Ե. Չարենցի կյանքի և ստեղծագործության ողբերգությունը»:

Ձևակերպել են նախագծի նպատակը, այն է՝ ավելի խորությամբ ուսումնասիրել Չարենցի կենսագրությունը 20-րդ դարի առաջին կեսի իրադարձությունների ֆոնին, բացահայտել բանաստեղծի անձնական ողբերգությունը և դրա արտացոլումը Չարենցի ստեղծագործություններում, ինչպես նաև լուսաբանել այդ հեռավոր դեպքերի արձագանքը արդի դարաշրջանում: Մյուս նպատակը՝ Չարենցի 125- ամյակի առթիվ կազմակերպել չարենցյան ընթերցումներ և այնտեղ ներկայացնել իրենց նախագծի արդյունքը:

Դրանից հետո ձևակերպել են հիմնախնդիրը՝ բացահայտել և ցույց տալ ժամանակաշրջանի ազդեցությունը գրողի աշխարհայացքի և ստեղծագործության վրա:

Հաջորդ քայլը նախագծի մասնակիցների որոշումն ու աշխատանքի բաշխումն էր, մասնակցում են բոլոր 5 սովորողները:

## Գործնական համատեքստ

Աշխարհում տեղի ունեցող փոփոխությունները պահանջում են մարդուց նոր մտածելակերպ. ընկալում, համագործակցային կարողություններ, նոր կարողունակություններ, նոր դերեր, հմտություններ:

Հետազոտության նպատակն է՝ նախագծային ուսուցման մեթոդով սովորողների մոտ զարգացնել սովորել սովորելու կարողունակությունը և նպաստել ստեղծագործ մտածողության զարգացմանը, ինչպես նաև առարկայի նկատմամբ հետաքրքրության մեծացմանը:

Հետազոտության խնդիրներն են.

- ակտիվացնել իմացական հետաքրքրությունները՝ որոնողական և ստեղծագործական ինքնաարտահայտման միջոցով
- ձևավորել ժամանակակից տեղեկատվական դաշտում կողմնորոշվելու տարրական կարողություններ
- զարգացնել քննադատական և ստեղծագործ մտածողություն ու վերլուծելու ունակություններ
- զարգացնել կարողություններ մեծերի օգնությամբ ինքնուրույն խնդրի լուծման հնարավոր մեթոդների բացահայտման համար
- զարգացնել երևակայություն և կոմունիկատիվ ունակություններ

Նախագծային ուսուցման իրականացումն ընթանում է հետևյալ փուլերով.

1. Նախապատրաստական փուլ.

ա/ նախագծի թեմայի և նպատակի ընտրություն

բ/ հիմնախնդրի ձևակերպում, հետազոտական հարցերի առաջադրում

գ/ նախագծի մասնակիցների քանակի որոշում

դ/ աշխատանքային խմբերի ձևավորում

2. Պլանավորման փուլ

ա/ տեղեկատվության սկզբնաղբյուրի որոշում

բ/ տեղեկատվության հավաքման և վերլուծության եղանակների պլանավորում

գ/ վերջնարդյունքների պլանավորում՝ գրավոր, բանավոր հաշվետվություն ցուցադրական նյութի

դ/ օգնությամբ, ֆիլմեր, պաստառներ, պատրաստուկներ և այլն

ե/ աշխատանքի գնահատման ընթացակարգի և չափանիշների սահմանում

զ/ աշխատանքային պարտականությունների բաժանում

3. Հետազոտական աշխատանք

ա/ տեղեկատվության հավաքում, խնդիրների միջանկյալ քննարկումներ

բ/ հետազոտական աշխատանքներ՝ դիտում, տեսական աղբյուրների ուսումնասիրում

գ/ փորձերի, էքսկուրսիաների կազմակերպում և այլն

դ/ խմբերի ինքնուրույն աշխատանքների նախագծում

4. Եզրափակիչ փուլ

ա/ կատարված աշխատանքի արդյունքների ներկայացում, վերլուծություն

բ/ եզրակացությունների ձևակերպում, արդյունքների ամփոփում

գ/ գործընթացի և արդյունքների ներկայացում ու գնահատում

5.Գնահատման փուլ

ա/ փորձագետների խմբի կազմում՝ կազմված ուսուցիչներից ու համադասարանցիներից

բ/ սովորողի՝ անհատական գնահատում ուսուցչի կողմից

գ/ սովորողի՝ փորձագետների խմբի գնահատում

դ/ սովորողի ինքնագնահատում

ե/ վերջնական գնահատականի ձևավորում

## Հետազոտության ընթացք

Աշխատանքը բաժանեցին հետևյալ կերպ. երկու աշակերտ՝ Անահիտն ու Արշակը, նյութեր են հավաքելու և մշակելու Չարենցի կյանքի առաջին շրջանի մասին, ներկայացնելու են Կարսի պատմությունը, հատկապես 20-րդ դարասկզբի՝ մինչև Կարսի հանձնումը թուրքերին՝ ներառյալ, դրա արձագանքները Չարենցի ստեղծագործություններում, «Երկիր Նաիրի» վեպում:

Օգտվելու են նաև Չարենցի գիտական կենսագրությունից, Չարենցի մասին ժամանակակիցների հուշերից, պատմական աղբյուրներից: Երկու սովորողներից մեկը՝ Արշակը, որ շնորհալի նկարիչ է, նկարելու է Կարսի նշանավոր վայրերից Առաքելոց եկեղեցին և Վարդանի կամուրջը:

Երրորդ սովորողը՝ Կարենը, շարունակելով Չարենցի կենսագրությունը, զուգահեռ պատմական ակնարկ է ներկայացնելու ստալինյան բռնաճնշումների մասին, ներկայացնելու է քսաներորդ դարի 30-ական թվականների հայ քաղաքական դաշտը, Չարենցի դեմ սկսված քաղաքական հալածանքները,
Ստալինի հետաքրքրվածությունը նրանով, նրա արձագանքը պոեզիայում, հատվածներ տպագրված և անտիպ էջերից:

Չորրորդ սովորողը՝ Սոնան, օգնելու է Կարենին, համակարգելու է արդեն կատարված աշխատանքը, օգնելու է մյուսներին՝ ՏՀՏ միջոցներով տեղեկատվություն գտնելու, եղած տեղեկությունները համակարգված ներկայացնելու:

Հինգերորդ սովորողը՝ Հրանտը, ներկայացնելու է վերջնական արդյունքի ձևավորման էսքիզներ ու գաղափարներ, որոնք քննարկվելու են հերթական աշխատանքային հանդիպումների ընթացքում:

Հնարավորության դեպքում կայցելենք Չարենցի տուն-թանգարան Երևանում՝ տպավորություններն ու տեղեկությունները ամբողջացնելու նպատակով, թեև երկու տարի առաջ եղել ենք թանգարանում:

Նախագծի համար նախատեսված երկու ամսում սովորողները կիմտանան տարբեր աղբյուրներից տեղեկատվություն ձեռք բերելու, մշակելու, վերլուծելու գործում, անընդհատ կապի մեջ կլինեն, կհաղորդակցվեն ուսուցչի և իրար հետ, կքննարկեն հաջողություններն ու դժվարությունները, միասին հաղթահարելու ուղիներ կփնտրեն: Միաժամանակ կամրապնդվի սերը գրականության հանդեպ, կձևավորվի գրական ճաշակ, ընթերցասիրություն:


Ես հարց եմ տալիս հաճախ հիմա ինձ,
Նայելով ոմանց «փառավոր» դնչին,
Թե ինչո՞ւ է դարն այսքան վիթխարի,
Իսկ սրանք - այսքան փոքրիկ ու չնչին...
fb.com/Հայ Մեծ Գրականություն
Եղիշե Չարենց



Այդ ընթացքում կխորացնեն իրենց գիտելիքները պատմությունից, պատմության համատեքստում կհասկանան քսաներորդ դարի հայ գրականության ձեռքբերումներն ու վայրէջքները, կպատկերացնեն պատմական իրադարձությունների ազդեցությունը հասարակական գիտակցության և նրա մաս կազմող գրականության վրա, ինչպես նաև կըմբռնեն Չարենցի և նրա սերնդակիցների կյանքի ու ստեղծագործության ողբերգությունը:

Նախագծի վրա աշխատելու ընթացքում կբարձրանա սովորողների պատասխանատվությունը թիմակիցների հանդեպ, կձևավորվի թիմում աշխատելու կարողություն, առանց որի անհնար է պատկերացնել ժամանակակից սոցիալական հասարակության առաջընթացը:

Սովորողները կարող են այսուհետև ևս ուսումնասիրել այնպիսի երևույթներ, որոնք համապատասխանում են իրենց հետաքրքրություններին և ապագա կյանքին: Նրանց մոտ կզարգանա ստեղծագործ և քննադատական մտածողությունը, հետազոտական և որոնողական հմտությունները: Ի վերջո ձեռք բերված այս հմտությունները արմատապես կբարելավեն ուսումնառության արդյունքները:

Սովորողների կատարած աշխատանքում առկա կլինեն նախագծի բոլոր հիմնական բաղադրիչները՝ հարցադրում (խնդիր), հետազոտություն, վավերականություն, սովորողի ձայն, անդրադարձ, վերանայում, հանրային արդյունք կամ պրոդուկտ:

Նախագիծը հիմնված է իմաստալից հիմնախնդրի լուծման կամ հարցադրման պատասխանների կառուցման վրա, որոնք պարունակում են որոշակի մարտահրավեր սովորողների համար, և գործի են դրվում բաց և ներգրավող առանցքային հարցադրման տարբեր ձևեր: Նախագիծը սովորողներին ներգրավում է հարցադրումներ, վարկածներ առաջադրելու, տարատեսակ ռեսուրսներ օգտագործելու, պատասխաններ կառուցելու մանրամասն և խորքային գործընթացում: Նախագծի համատեքստը, գործընթացները, գործիքները, որակի չափանիշները իրական կյանքից են, ունեն իրական ազդեցություն և/ կամ կապված են սովորողի սեփական հետաքրքրությունների, անհանգստությունների, ինքնության հետ:

Ապագան պատկանում է այն հասարակությանը, որտեղ ավելի ու ավելի են գնահատվում նախագծերի իրականացման շնորհիվ ձեռք բերված կարողությունները, հմտություններն ու հաջողությունները:

Նախագծի ավարտին կիրականացվի գնահատում՝

ա. աշակերտի անհատական գնահատում ուսուցչի կողմից

բ.աշակերտի ինքնագնահատում

գ. վերջնական գնահատում:

Աշխատանքային խումբը նախատեսում է վերջնական արդյունքը ներկայացնել հետաքրքիր ձևավորմամբ, դիզայներական ինքնատիպ լուծումներով, լուսանկարներով և ձեռքի նկարներով գրքի տեսքով:

Եթե սովորողը կարողանում է հաղթահարել աշխատանքը նախագծում, ապա կարելի է հուսալ, որ նա իր չափահաս կյանքում կլինի ավելի նախաձեռնող. կկարողանա պլանավորել իր գործողությունները, կողմնորոշվել տարբեր իրավիճակներում, համատեղ աշխատել տարբեր մարդկանց հետ, այսինքն՝ հարմարվել փոփոխվող պայմաններին:

Նախագծային մեթոդը թույլ է տալիս ինտեգրել տարբեր տիպի գործունեություններ՝ դարձնելով ուսուցման գործընթացն ավելի հետաքրքիր և, հետևաբար, ավելի արդյունավետ: Այն ուսուցչին հնարավորություն է տալիս ոչ ստանդարտ մոտեցում ցուցաբերել դասարանական և արտադասարանական աշխատանքներին:

# Եզրակացություն

Այսպիսով, ամփոփելով ասվածը, կարող ենք նշել, որ նախագծային աշխատանքը որոշակի առավելություններ ունի ավանդական մեթոդների նկատմամբ:

Եթե ավանդական մեթոդները հիմնականում ուղղված են պատրաստի գիտելիք տալուն, նախագծային մեթոդը զարգացնում է սովորողի ինտելեկտը, պլանավորելու կարողությունը, նախաձեռնողականությունը, ստեղծարարությունը: Աշակերտը սովորում է վերլուծել, կանխատեսել,ձևակերպել խնդիրը, աշխատել գաղափարի շուրջը: Ուսուցիչն էլ այս դեպքում պարզ գիտելիք փոխանցողից դառնում է տարբերակներ ու գաղափարներ մշակող, համակարգող, փորձագետ, խորհրդատու:

Նախագծային մեթոդը ուսուցչին հնարավորություն է տալիս ոչ ստանդարդ մոտեցում ցուցաբերել դասարանական ու արտադասարանական աշխատանքների հանդեպ:

Դրան հասնելու համար ուսուցիչը պիտի շարունակական կրթությամբ զբաղվի, ինքնակրթվի, տարիների իր փորձը համալրի ուսուցման նոր, արդյունավետ մեթոդներով, որոնցից մեկն էլ նախագծային ուսուցումն է:

Գրականություն


- Кильпатрик В. *Основы метода*. М.-Л., 1928
- *Новые педагогические и информационные технологии в системе образования: Учебное пособие* / Е. С. Полат , М. Ю. Бухаркина, М. В. Моисеева, А. Е. Петров; под ред. Е. С. Полат . — М.: Издательский центр «Академия», 1999—2005.
- Коллингс Е. *Опыт работы американской школы по методу проектов*. М., 1926.
- Соловьев И. М.. Из практики метода проектов в американских школах // *На путях к новой школе*. 1929.